Սազ

Լարային կսմիթավոր նվագարան է: Տարածված է Կովկասում, Մերձավոր Արևելքում: Գոյություն ունեն սազի մենակատարային, անսամբլային մեծ ու փոքր տեսակներ, որոնք, համապատասխանաբար, ունեն տարբեր թվով մետաղե լարեր՝ 4–10:

Սազը սիրված նվագարան է հատկապես գուսանների և աշուղների շրջանում, այսինքն՝ հնագույն ծագում ունի:

Աշուղական սազը սեփական երգին նվագակցող երաժշտական գործիք է, որտեղ երգը բնորոշվում է ազատ հանկարծաբանական (իմպրովիզացիոն) ոճով, իսկ սազի նվագակցությունը՝ մեղեդիական զարգացման հարուստ երաժշտախաղերով:

Տանձաձև իրանը (թթենու կամ ընկուզենու փայտից) ծածկված է բարակ կափարիչով:

Սազի ձայնը մաքուր է ու զրնգուն, սակայն մեղմ ու թույլ: